

## ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ



### Մարզկենտրոնը՝

ք. Գավառ

### Տարածաշրջանները

Գավառ,  
Սևան,  
Մարտունի,  
Վարդենիս,  
Ճամբարակ

### Քաղաքները՝

Գավառ,  
Ճամբարակ,  
Մարտունի,  
Սևան,  
Վարդենիս

Տարածքը	5 349 քառ. կմ/
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	18.0 %
Քաղաքային համայնքներ	5
Գյուղական համայնքներ	87
Քաղաքներ	5
Գյուղեր	93
Բնակչության թվաքանակը 2014թ. տարեվերջին	2 33.0 հազ. մարդ/
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	70.2 հազ. մարդ/
գյուղական	162.8 հազ. մարդ/
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2014թ.	7.7 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	30.1 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	345 573.8 հա/
այդ թվում՝ վարելահողեր	81 739.7 հա/

**ՀՀ Գեղարքունիքի մարզը** գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի արևելքում՝ շրջապատելով **Սևանա լիճը**:

**Մարզը հյուսիսից սահմանակից է** ՀՀ Լոռու և Տավուշի մարզերին, արևելքից՝ պետական սահմանով, սահմանակից է Ադրբեջանին, հարավից՝ ՀՀ Վայոց ձորի մարզին, հարավարևմուտքից՝ ՀՀ Արարատի մարզին և արևմուտքից՝ ՀՀ Կոտայքի մարզին:

**Մարզի** ամենաերկար ձգվածությունը հյուսիս-արևմուտքից հարավարևելք կազմում է 115 կմ, արևմուտքից արևելք՝ 85կմ, ամենախոր իջվածքը Գետիկ գետի կիրճն է (Ձորավանք գյուղ, 1 325 մ), ամենաբարձր կետը՝ Աժդահակ լեռան գագաթը ( 3 598 մ):

Բարձր լեռներն են Սպիտակասարը (3 555 մ), Վարդենիսը (3 522 մ), Գեղասարը (3 446 մ): Ամենաերկար գետերն են Արզիճին (51 կմ), Գավառագետը (47 կմ) և Մասրիկը (45 կմ):

Ամենամեծ լիճը **Սևանա լիճն է** (1 275.6 կմ<sup>2</sup>, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1 900 մ), համեմատաբար փոքր լճերից են Աժդահակի և Ադմադանի խառնարանային լճերը՝ մինչև 50 մ տրամագծով և 15 մ խորությամբ:

**Մարզի** տարածքով անցնում է Երևան-Սևան-Դիլի-ջան հանրապետական նշանակության մայրուղին: Գործում է Սելիմի լեռնանցքով անցնող <<Հարավ-Հյուսիս>> մայրուղին:

**ՀՀ Գեղարքունիքի** մարզում է գտնվում **Սևանա լիճը**, որը ոչ միայն մարզի, այլ նաև հանրապետության համար ունի առանձնահատուկ կարևորություն: Այն Հարավային Կովկասի քաղցրահամ ջրերի ամենամեծ ավազանն է: Լիճն էական ազդեցություն ունի ողջ մարզի ոչ միայն բնապահպանական հավասարակշռության, այլ նաև տնտեսության վրա:

Մարզի տարածքում է գտնվում <<**Սևան**>> **ազգային պարկը** (կազմավորվել է 1978թ.): Այն զբաղեցնում է Սևանի միջլեռնային գոգավորության հատակը կազմող Սևանա լճի և դրա հատակից ազատված տարածքները: Մակերեսը կազմում է 150.1 հազ.հա, որից 24.9 հազ.հա՝ առափնյա ցամաքային տարածքներ են: Լիճը շրջափակված է Արեգունու, Գեղամա, Վարդենիսի, Փամբակի և Սևանի լեռնաշղթաների լանջերով: Այստեղ պահպանվել են բույսերի 1 600 և կենդանիների 330 տարատեսակներ:

**Մարզում** են գտնվում բազմաթիվ հանքավայրեր, որոնցից են ոսկու, դոլոմիտի, բազալտի, ավազի, հրաբխային տուֆի հանքավայրերը: Շահագործվող հանքավայրերից մի մասին բաժին է ընկնում երկրում արդյունահանվող հանքաքարի զգալի մասը:

2014թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան հատվածների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 1.8 %,
- գյուղատնտեսություն 19.0 %,
- շինարարություն 2.5 %,
- մանրածախ առևտուր 1.5 %,
- ծառայություններ՝ 0.9 %:

Մարզի տնտեսության առաջատար ճյուղը **գյուղատնտեսությունն** է, հատկապես հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքի արտադրությունները:

Մարզի արդյունաբերության հիմնական ուղղությունը **հանքագործական արդյունաբերությունն** է: Կարևոր նշանակություն ունի նաև մշակող արդյունաբերությունը, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդամթերքի, ներառյալ՝ խմիչքները, արտադրությունը:

**Բեռնաուղևորափոխադրումները** մարզում իրականացվում են ավտոմոբիլային

տրանսպորտով:

**Մարզկենտրոնը Գավառը** (2014թ. տարեվերջին՝ 20.0 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 92 կմ հեռավորության վրա: Քաղաքը նախկինում հանրապետության արդյունաբերական կենտրոններից էր, սակայն մի շարք խոշոր գործարանների աշխատանքների դադարեցման պատճառով արդյունաբերական արտադրանքի թողարկումն էապես կրճատվել է:

Այժմ տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը **գյուղատնտեսությունն է**:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը **մշակող արդյունաբերությունն** է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունեն մեքենաշինության, շինանյութերի, թեթև և սննդի արդյունաբերության ճյուղերը:

**Սևան քաղաքը** (2014թ. տարեվերջին՝ 19.3 հազ. բնակիչ, Երևանից 66 կմ հեռավորությամբ) գտնվում է Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին: Տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը զբոսաշրջությունն է:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը **մշակող արդյունաբերությունն** է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունեն շինանյութերի, քիմիական, սննդի և մեքենաշինության արդյունաբերության արտադրությունները:

**Մարտունի քաղաքը** (2014 թ. տարեվերջին՝ 12.5 հազ. բնակիչ) գտնվում է Սևանա լճի հարավարևմտյան ափին (Երևանից 130 կմ հեռավորության վրա): Տնտեսության գլխավոր ճյուղն արդյունաբերությունն է, թեև վերջին տարիներին արձանագրվել է թողարկվող արտադրանքի ծավալների զգալի կրճատում:

**Քաղաքի** արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունեն մեքենաշինության, շինանյութերի, քիմիական և սննդի արդյունաբերության ճյուղերը:


**Վարդենիս քաղաքի** (2014թ. տարեվերջին՝ 12.6 հազ. բնակիչ, Երևանից 168 կմ հեռավորության վրա) առաջատար ճյուղն արդյունաբերությունն է: Ընդլայնման մեծ հեռանկարներ կան հատկապես հանքավայրերի շահագործման և գյուղատնտեսական մթերքի վերամշակման ուղղություններում:

**Քաղաքի** արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերությունը:

**Ճամբարակ քաղաքի** (2014թ.՝ 5.8 հազ. բնակիչ) տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը գյուղատնտեսությունն է (Երևանից 119 կմ հեռավորության վրա): Արդյունաբերությունը համեմատաբար թույլ է զարգացած:

**Ճամբարակի** տարածաշրջանում է գտնվում մարզի բնական անտառների ավելի քան 90%-ը: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերությունը:

ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏԱՐԻ ՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ, 2015թ. հունվարի 1-ի դրությամբ %



ՄԱՆՐԱԾԱՆ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ

	Քանակը				
	2010	2011	2012	2013	2014
Մանրածախ առևտրի օբյեկտներ, բնդամներ	475	440	476	443	498
այդ թվում՝					
խանութներ	230	226	269	239	288
կրպակներ	184	156	144	140	144
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	2	2	2	2	2
սպառողական ապրանքների շուկաներ	2	2	2	2	2
առևտրի այլ օբյեկտներ	57	54	59	60	62

**ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

	Քանակը				
	2010	2011	2012	2013	2014
Պետական նախադպրոցական	41	41	42	42	44
Պետական հանրակրթական	127	127	126	126	126
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	17	17	17	17	15
Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական <sup>1</sup>	4	4	3	3	3
Պետական միջին մասնագիտական ուսումնական	7	7	7	8	8
Ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական	1	1	1	1	1
Պետական բարձրագույն ուսումնական	1	1	1	1	1
Ոչ պետական բարձրագույն ուսումնական	1	1	1	1	1

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ**

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2015թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ
Գավառ	ք. Գավառ	20 001
Սևան	ք. Սևան	20 633
	գ. Գագարին	
Մարտունի	ք. Մարտունի	12 509
Վարդենիս	ք. Վարդենիս	12 646
Ճամբարակ	ք. Ճամբարակ	5 784

**ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ**

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2015թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ **
<b>Գավառի տարածաշրջան</b>			
1	Բերդկունք		295
2	Գանձակ		4 257
3	Գեղարքունիք		1 885
4	Լանջաղբյուր		2 449
5	Լճափ		1 129
6	Ծաղկաշեն		593
7	Ծովագարդ		2 186
8	Կարմիրգլուղ		6 127
9	Հայրավանք		902

<sup>1</sup> Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2015թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ **
10	Նորատուս		6 030
11	Սարուխան		7 914
<b>Կրասնոսելսկի տարածաշրջան</b>			
1	Աղբերք		323
2	Այգուտ	•Այգուտ •Ճապկուտ	908
3	Անտառամեջ		158
4	Արտանիշ		607
5	Գետիկ		470
6	Դպրաբակ		589
7	Դրախտիկ		982
8	Թթուջուր		1 111
9	Կալավան	•Կալավան •Բարեպատ	170
10	Ջորավանք		145
11	Մարտունի		582
12	Շորժա		568
13	Ջիլ		627
14	Վահան		1 149
<b>Մարտունու տարածաշրջան</b>			
1	Աստղաձոր		4 569
2	Արծվանիստ		3 220
3	Գեղիովիտ	•Գեղիովիտ •Նշխարք •Լեռնակերտ	6 286
4	Երանոս		5 447
5	Զոլաքար		6 704
6	Լիճք		5 177
7	Ծակքար		2 843
8	Ծովասար		3 021
9	Ծովինար		5 157
10	Ջորագուղ		4 464
11	Մաղինա		1 151
12	Ներքին Գետաշեն		8 541
13	Վաղաշեն		4 344
14	Վարդաձոր		3 033
15	Վարդենիկ		8 988
16	Վերին Գետաշեն		4 675
<b>Սևանի տարածաշրջան</b>			
1	Գեղամավան		2 068
2	Դոմաշեն		2 798
3	Զովաբեր		1 590
4	Լճաշեն		4 711
5	Ծաղկունք		1 081
6	Ծովագուղ		4 408
7	Նորաշեն		461
8	Չկալովկա		519
9	Սեմյոնովկա		246
10	Վարսեր		2 012
<b>Վարդենիսի տարածաշրջան</b>			
1	Ագատ		161
2	Ախարաձոր		382
3	Ակունք		4 166
6	Այրք		538
9	Ավազան		190

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2015թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ **
10	Արեգունի		366
12	Արծվաշեն		-
14	Արլունք		582
17	Գեղամարակ		128
18	Գեղամասար		1 060
21	Գեղաքար		167
24	Դարանակ		204
35	Լճավան		588
37	Լուսակունք		1 470
38	Խաչաղբյուր		1 299
42	Ծափաթաղ		345
45	Ծովակ		2 773
49	Կախակն		488
50	Կարճաղբյուր		2 518
52	Կույթ		156
53	Կուտական	•Կուտական •Ջառիվեր	267
59	Մաքենիս		575
60	Մեծ Մասրիկ		3 447
62	Ներքին Շորժա		77
63	Նորաբակ		267
64	Նորակերտ		1 028
67	Շատջրեք		482
68	Շատվան		436
71	Ջաղագաձոր		155
75	Սոթք		938
78	Վանևան		343
83	Վերին Շորժա		91
84	Տորֆավան		503
85	Տրետուք		259
86	Փամբակ		539
87	Փոքր Մասրիկ		825

**ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2014թ.**

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք <sup>1</sup>	տղամարդիկ <sup>1</sup>
Բնակչությունը, մարդ	10 000	4 954	5 046
Ծնվածներ, մարդ	132	62	70
Մահացածներ, մարդ	78	38	40
Ամուսնություններ	52	X	X
Ամուսնալուծություններ	7	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	31.4	X	X
Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	140	71	69
հանրակրթական	1 255	582	673
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական	106	67	39

<sup>1</sup> Ցուցանիշները հաշվարկային են:

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք <sup>1</sup>	տղամարդիկ <sup>1</sup>
կենտրոններ			
նախնական մասնագիտական (արհեստագործական)	22	3	19
միջին մասնագիտական	64	34	30
բարձրագույն մասնագիտական	72	39	33
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	32 205	...	...
Մարզիկներ, մարդ	74	5	69
Զբաղվածներ, մարդ	3 920	2 163	1 757
նրանցից՝ գիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	152	121	31
բժիշկներ	14	...	...
միջին բուժանձնակազմ	41	...	...
Գործազուրկներ, մարդ	240	93	147
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1 348	799	549
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	567	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	15 325	...	...
թատրոն	89	...	...
համերգ	-	-	-
թանգարան	151	...	...
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	34	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	17	X	X
միջին ծանրության	13	X	X
ծանր	4	X	X
առանձնապես ծանր	0.0	X	X